

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 57/3

29 նոյեմբերի 2013 թ.

Քննարկվեց <Հացի 7-րդ գործարան> ՍՊԸ դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ <Հացի 7-րդ գործարան> ՍՊԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն) 2008 թ-ից գործունեություն չի իրականացնում: 2013թ-ի մարտ ամսին Ընկերությունը վաճառել է հիմնական միջոց և 2013թ-ի ապրիլի 18-ին հարկային մարմին է ներկայացրել շրջանառության հարկի հաշվարկ ու ավելացված արժեքի հարկի հաշվարկը (58.35 միլիոն դրամը գերազանցող մասով): Ընդ որում, ԱԱՀ-ի հաշվարկը ներկայացնելիս հաշվարկի ձևը էլեկտրոնային տարբերակում եռամսյակը նշելու փոխարեն, նշվել է 3-րդ ամիսը:

Գրեթե 2 ամիս անց ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ (այսուհետ նաև Տեսչություն) կողմից Ընկերությանը ներկայացվել է 2013 թ-ի հունիսի 17-ին կազմված՝ 495 կամերալ ուսումնասիրության արձանագրությունը (այսուհետ Արձանագրություն), որով Ընկերությանը հայտնվել է, որ չնայած Ընկերությունը չի համարվել ԱԱՀ վճարող, սակայն ներկայացրել է 2013 թ-ի 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկ:

Նշված Արձանագրությունը ստանալուց հետո Ընկերությունը դիմել է Տեսչության համապատասխան աշխատակիցներին՝ պարզաբանումներ ստանալու համար: Տեսչության աշխատակիցները պնդել են, որ պետք է ներկայացվի ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկ, քանի որ Ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում նշվել է 3-րդ ամիսը:

2013 թ-ի հուլիսի 18-ին Ընկերության կողմից ներկայացվել է 2013 թ-ի 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկ: Այդ ուղղման արդյունքում Ընկերության կողմից հայտարարագրված հարկի գումարը չի փոխվել, սակայն Տեսչության կողմից Ընկերությանն առաջադրվել է վճարել լրացուցիչ 1.402.000 դրամ գումարով տուգանք՝ հաշվարկը 15 օրից ավել ուշ ներկայացնելու համար:

<Հացի 7-րդ գործարան> ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Նախ, Տեսչությունն արձանագրությունը կազմել և Ընկերությանն է ներկայացրել երկու ամիս ուշ: Եթե արձանագրությունը ներկայացվեր Ընկերության կողմից առաջին անգամ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկի ժամկետին հաջորդող 15-օրյա ժամկետում, Ընկերությունը հնարավորություն կունենար ուղղում կատարել 15 օրը չգերազանցող ժամկետում՝ խուսափելով անտեղի լրացուցիչ գանձման առաջադրված տուգանքի մեծությունից: Այնուամենայնիվ, ներկայացված արձանագրությամբ Ընկերությանը հայտնվել է, որ Ընկերությունն արդեն իսկ ներկայացրել է 2013 թ-ի 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկ, որով թյուրիմացության մեջ է գցել Ընկերությանը: Արդյունքում, Ընկերությունը բաց է թողել հնարավոր մոտ ժամկետում ԱԱՀ առաջին եռամսյակի հաշվարկ ներկայացնելու հնարավորությունը: Այդ կապակցությամբ խնդրում ենք քննարկման առարկա դարձնել Տեսչության անգործությունը և դրա հետևանքով Ընկերության կողմից հաշվարկի ուշ ներկայացմամբ պայմանավորված՝ հաշվարկված տուգանքի գումարի չափով Ընկերությանը փոխհատուցման հարցը:

Ընկերությունը դեռևս 2013 թ-ի ապրիլի 18-ին հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկի վերաբերյալ էլեկտրոնային եղանակով հարկային մարմնից ստացել է

ծանուցում՝ հաշվարկն ընդունված լինելու վերաբերյալ՝ <Ձեր ներկայացրած հաշվետվությունը ընդունվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից> գրառմամբ: Ընկերությունը այդ ԱԱՀ-ի հաշվարկով հարկային մարմինն հայտարարագրել է գործարքից բխող իրական հարկային պարտավորությունները, հետևաբար, անհասկանալի է միայն տեխնիկական վրիպակի պատճառով (հաշվարկի ձևում 1-ին եռամսյակի փոխարեն նշվել է 3-րդ ամիս) Ընկերությանը ծանրաբեռնել տուգանքով այն դեպքում, երբ Ընկերությունը արդեն իսկ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով հայտարարագրել և վճարել է հարկի գումարը՝ օրենքով սահմանված ժամկետում:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են: Հաշվի առնելով այն, որ Ընկերությունը դեռևս 2013 թ-ի ապրիլի 18-ին հարկային մարմին ներկայացրել է ԱԱՀ-ի հաշվարկ և հայտարարագրել է իր հարկային պարտավորությունների չափը՝ պահպանելով օրենքով սահմանված ժամկետը, գտնում ենք, որ Ընկերությունը բովանդակային առումով կատարել է օրենքի պահանջը:

<Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 32-րդ և 33-րդ հոդվածների դրույթների վերլուծությունից ընկերությունը գտնում է, որ Օրենքով և այլ իրավական ակտերով ԱԱՀ վճարողների համար սահմանված չէ հարկային մարմին ԱԱՀ-ի հաշվարկների եռամսյակային կամ ամսական տարբերակով ներկայացնելու պահանջ: Տվյալ դեպքում էական է, որ, հարկ վճարողը, անկախ հաշվարկի եռամսյակային կամ ամսական հաշվարկի ձևերից որն է ներկայացրել, ներկայացրած լինի հաշվարկը և այդ հաշվարկում հայտարարագրած լինի պետական բյուջե վճարման ենթակա պարտավորության չափը:

Հաշվի առնելով, որ Օրենքում առկա է երկիմաստություն և տարընթերցում, գտնում ենք, որ տվյալ դեպքում Տեսչությունը, ղեկավարվելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, խնդիրը պետք է մեկնաբաներ և կիրառեր Ընկերության օգտին, Ընկերությանը չծանրաբեռնելով լրացուցիչ հարկային պարտավորություններով:

Ելնելով վերոշարադրյալից, ընկերությունը խնդրում ենք վերանայել Ընկերությանը առաջադրված 1402000 դրամ գումարով տուգանքը կամ սահմանված կարգով փոխհատուցել նշված գումարը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Հանձնաժողովն արձանագրեց այն փաստը, որ <Հացի 7-րդ գործարան> ՍՊԸ-ն 2008 թ-ից մինչև 2013թ-ի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում գործունեություն չի իրականացրել և որևէ գործարք չի կատարել:

2013 թ-ի մարտ ամսին Ընկերության կողմից իրացվել է հիմնական միջոց: Այնուհետև 2013թ-ի ապրիլի 18-ին ընկերությունը հարկային մարմին է ներկայացրել ավելացված արժեքի հարկի հաշվարկը (58.35 միլիոն դրամը գերազանցող մասով), սակայն հաշվարկի էլեկտրոնային տարբերակում (7-րդ տողում) 2013 թ-ի 1-ին եռամսյակ նշելու փոխարեն թյուրիմացաբար նշվել է 2013 թ-ի 3-րդ ամիս:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Ընկերությունը հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով հայտարարագրել է կատարված գործարքի իրական արժեքը և դրանից բխող հարկային պարտավորությունների չափը, ինչպես նաև այն, որ Ընկերությունը սահմանված ժամկետում վճարել է գործարքից բխող հարկային պարտավորությունը:

Հանձնաժողովի համոզմամբ, սույն գործի վերաբերյալ որոշում ընդունելիս անհրաժեշտ է հաշվի առնել <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթը, որի համաձայն. <Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են>:

Քննարկվող դեպքում Ընկերությունն իրականացված գործարքի և դրանից բխող հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին է ներկայացրել ԱԱՀ-ի հաշվարկ, որում, սակայն, 2013 թ-ի 1-ին եռամսյակ նշելու փոխարեն թյուրիմացաբար նշել է 2013 թ-ի 3-րդ ամիս:


Հանձնաժողովը գտնում է, որ սույլ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ըստ էության, Ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են, հետևաբար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում թյուրիմացաբար կատարված մեխանիկական սխալը չի կարող հիմք հանդիսանալ Ընկերության կողմից 2013 թ-ի 1-ին եռամսյակի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկը, որպես 2013 թ-ի 3-րդ ամսվա համար ներկայացված դիտարկելու, և դրա հետևանքով Ընկերության նկատմամբ լրացուցիչ պարտավորություններ առաջադրելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

<Հացի 7-րդ գործարան> ՍՊԸ գանգատը բավարարել և ընկերության անձնական հաշվի քարտից նվազեցնել լրացուցիչ հաշվարկված պարտավորությունը՝ գումարով 1.402.000 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ